ՆՈՐ-ԴԱՐ

№ 117. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Հարսի 14 Յուլիսի 1884 Հարսի 14 Յուլիսի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 117

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Նատով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրության հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն ժամում։
Յայտարարության վճարը բաշխն 2 կ. բեկլամների համար՝ կրկնապատիկ.

Յաւելուած սրտի յայտնում են ՀԱՅՐԱՊԵՏ և ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԻՍԵԱՆՑ եղբարք յարգելի բարեկամներին և ծանօթներին իրենց հօրեղբօր օրորդի—Թիֆլիսի կլասիքական I Գիմնազիոնի V դասատան աշակերտ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱԻԵՏԻՍԵԱՆՑԻ ՄԱՀԸ։

Թաղման հանդէսը կը կատարուի այսօր՝ 14 յուլիսի առաւօտեան 9 ժամին, սուրբ պատարագից յետոյ սուրբ Նորաշէն եկեղեցուց կը տանեն դէպի Հաւլաբարի գերեզմանատունն։

«Նոր-Դար»-ի բաժանորդագրությունը շարունակվում է։

Կարելի է կէս տարով բաժանորդ գրուել յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1885 թ. ամեն տեղի համար գինն է — 6 րուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.— Մեր մամուլի գրութիւնը։

Քրոնիկոն.—Այլ և այլք։

Թղթակցութիւններ. — Թիֆլիս-Խանղուրայից, և Նուխուց։

Քաղաքական.—Լուրեր։

„Նոր-Դար“-ի պատասխաններ. Հեռագիրներ։

Յայտարարութիւններ։

Բանասիրական.—Հարուստները զուարճանում են։—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ՋՈՒԱՐՃԱՆՈՒՄ ԵՆ.

—

Խոստովմա կատարեցի

Կէսօրից երկու ժամ արդէն անցել էր։ Սամուէլը Ելենային իւր Թևի առած զբօսնում էր առանձնարանի հովանաւոր այգիում և զանազան լօսակցութիւններով ու սիրալիր կատակներով զբաղեցնում էր նրան, աշխատելով մի առ ժամանակ ցրել նրա տխրութիւնը։ Նրանք դեռ չէին ձաշել և սպասում էին իրենց ապագայ խաչեղբայր—Մարգարին։ Վերջինս շատ էլ սպասեցնել չը տուաւ։ Հազիւ երկու գոգերը մի փոքր հանգստանալու համար նստեցին շտորուանի մօտ գըտնուող նստարանի վերայ, և ահա պարտիզի կանաչ վանդակադրան մէջ երեւեցաւ Մարգարը։ Մօտենալով շատ քաղաքավարութեամբ ողջունեց նա Ելենային և Սամուէլին։ Վերջինս ծանօթացրեց նրան իւր սիրուհւոյ հետ, իւր „ապագայ հարսնացուն“ անուանելով նրան։

—Ամենից առաջ պատիւ ունիմ ձեր Թանկագին առողջութեան մասին հարցնել, օրիորդ։ Ես ինձ բաղդաւոր եմ համարում այս րոպէին ձեր ընկերութեան մէջ գտնուելուս համար. այս թերևս արած հաճոյախօսութեամբ դիմեց Մարգարը Ելենային։

—Շնորհակալ եմ, պարոն, շատ լաւ եմ, ամաչկոտ ձայնով պատասխանեց Ելենան և աչքերը գցեց գետնին։

—Իսկ յետոյ սրբազան պարտք եմ համարում խոստովանել ձեր առաջ—դարձաւ նա Սամուէլին, որ դուք մի շատ քաջ երևտասարդ էք, և արժէ ձեզ յարգել։ Որովհետև ինչ որ խոստացաք, այն էլ կատարեցիք. այսուհետև ես ձեզ կանուանեմ „ամենայարդոյն“...

—Դուք այն աւետարանի գործն էք վերաբերմունքեամբ էք խօսում, ընդհատեց նրան Սամուէլը, (տեսնելով որ իւր բառերը քիչ են մնում թէ իւր չիմաստութեամբ ամեն գաղտնիք լոյս աշխարհ հանէ), այո այդ գործում ես շատ ճարպիկ չարժուեցայ։

Մարգարը խոյոյն հասկացաւ իւր սխալը և խօսքը շուռ տուաւ։

—Այդ բոլորը Թողնենք մէս կողմը. դուք այն ասացէք թէ՝ ինչ էք յանձնում ինձ իմ պաշտօնը.

—Խաչեղբայրութիւն, հարցրեց Սամուէլը։

—Ի հարկէ. ես այսօր հենց այդ բանը լսմանալու համար եկայ։

—Շատ շուտ, մինչև երկու շաբաթը։

—Օ՜ օ՜, ոչ, ես համաձայն չեմ. այդ շատ է հեռի. միայն մի շաբաթ կարող եմ ես ժամանակ տալ ձեզ։

—Դուք ինչ կասէք սրա համար, օրիորդ. արդեօք ես աւելի լաւ չեմ խօսում։

Ելենան ոչինչ չը պատասխանեց, այլ շառագունուելով աչքերը դարձրեց մէս կողմը։

Սամուէլը նրա չխոհեմութիւնը տեսնելով նկատեց.

—Այդ բանի համար մենք այսօր առանձին կը խօսենք. օրիորդը երևի չէ ուզում մասնակցել մեր այդ զրոյցին։ Առ այժմ երթանք ձաշելու, յարեց նա, ծառան ահա մեզ հրաւիրելու է գալիս։

Եւ նրանք ուղղուեցան դէպի տուն։

Այսօր ձաշը փառաւոր և բազմախորտիկ էր. սակաւաթիւ հիւրերին ծառայում էին երկու մաքուր հագնուած սպասաւորներ։ Թանկագին գինիների և օշարակների թիւը նոյնպէս կատարեալ էր։ Կենացներից առաջինը նուիրուեցաւ Ելենային. երկրորդը Սամուէլին և երրորդը ապագայ խաչեղբայրը Մարգարին. այնուհետև առաջանցան ապագայ նշանադրութեան, հարսանեաց, ծննդեան և այլ կենացներ, որոնք բոլորն էլ համեմվում էին ախորժելի երգերով։ Այդ բոլորը մի փոքր ուրախացնում էր Ելենայի սիրտը և մօտաշուտ երջանկութեան մի յոյս պարարում էր նրա Ջնջուած և կոտրուած սիրտը...

Թիֆլիս 13 յուլիսի, 1884

ՄԵՐ ՄԱՄՈՒԼԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Որ հայերը արևելեան ազգերի մէջ հայոց ազգը ամենից աւելի խելօք, աւելի ընդունակ են համարում, որ դա ամենից աւելի սինդ պահպանում է իւր ազգային հրօնը, իւր ընտանեկան կեանքի պարզութիւնը, սովորութիւնները, աւանդութիւնները...նոր բան չէ, այդ վաղուց յայտնի է։ Նորն այն է, որ հայերը հաւատացած են և աշխատում են եւրոպացիներին էլ հաւատացնել, որ իրենք արևելեան ազգերի մէջ ամենից աւելի յառաջադէմն են, ամենից աւելի մօտիկ արևմուտքին, աւելի ըմբռնող և իւրացնող են եւրոպական քաղաքակրթութեան և կուլտուրայի մտքերն ու յարմարաւոր կարգերն։

Հայերը կարծում են, որ արևելեան ազգերի մէջ իրենք են կոչուած արևմուտքի քաղաքակրթութիւնը միջնորդելու դէպի արևելք, դէպի խորը ասիական ընդարձակ երկիրները։

Ջենք ուզում խօսել հայի ընտանեկան պարզութեան, ազգային հրօնի, լեզուի, սովորութիւնների պահպանութեան վերայ։ Ամենօրեայ տխուր փորձերը ցոյց են տալիս թէ հայերը ինչպիսի խաղ են խաղում իրենց լեզուի, իրենց ընտանեկան պարզութեան, իրենց հրօնի և իրենց հոչակուած նահապետական սովորութիւնների հետ։ Եւ այդ փորձերը չեն ապացուցանում, որ հայերը իրենց շրջապատող ազգերից աւելի հաւատարիմ լինէին իրենց նախնի ընտանեկան պարզութեանը, իրենց ազգային հրօնին, լեզուին, ազգային սովորութիւններին. այդ փորձերը բոլորովին հակառակն են ապացուցանում։

Բայց այդ թողնենք։

Դառնանք այն կէտին, որ հայերը իրենց աւելի յառաջադէմ ազգն են համարում երևելքում։

Ինչ բանից կարելի է այդ ստուգել։

Երևելի քաղաքատնտես պրօֆեսսոր Ռօշերը համալսարանի ամբիոնից ասում էր, որ մի ժողովրդի կուլտուրան կարելի է չափել նրա գործ դրած սապօնի քանակութիւնից։

Բայց կարելի է մի երկրի քաղաքակրթութեան աստիճանը չափել և նրա մէջ գոյութիւն ունեցող մամուլի դրութիւնից։

Մեզանում դեռ շատ քիչերն են հասկանում մամուլի նշանակութիւնը և այն ահագին տեղը, որ նա բռնում է մի երկրի վերածնութեան, յառաջադիմութեան գործում։

Տեսնենք թէ մամուլը ինչ դրութեան մէջն է։

Անօթի է մեր մամուլի դրութիւնը համեմատել խորը Ասիայում-Ճապոնիայի, Հնդկաստանի մամուլի դրութեան հետ։ Այդ հեռու երկիրներում պարբերական հրատարակութիւնները թէ բազմաթիւ են և թէ թերթեր կան, որոնց բաժանորդներն քան և աւելի հազարների են հասնում։

Կովկասում և Ռուսիայում հայերի թիւը համարվում է մէկ միլիոնից աւելի, բայց մինչև այսօր մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները միասին առած՝ հազիւ թէ ունենան—չորս հազար բաժանորդներ, բայց ինչ բաժանորդներ։

Այդ բաժանորդների մէկ որոշ մասն էլ պէտք է հաշուել Պարսկաստանի, Փոքր-Ասիայի և ուրիշ երկիրների վերայ։ Եթէ ասենք, որ այդ բաժանորդներից շատերը միևնոյն ժամանակ անխտիր բաժանորդ են հայոց պարբերական թերթերին, այն ժամանակ կարելի է հայ պարբերական հրատարակութիւնների բաժանորդների թիւը համարել մօտաւորապէս միմիայն —երկու հազար։ Ուրեմն մէկ միլիոնի համար երկու հազար բաժանորդ։ Ահագին տարբերութիւն։

Ինչ է պատճառը, որ հայերը իրենց աւելի յառաջադէմ ազգն են համարում երևելքում։

Ինչ բանից կարելի է այդ ստուգել։

Երևելի քաղաքատնտես պրօֆեսսոր Ռօշերը համալսարանի ամբիոնից ասում էր, որ մի ժողովրդի կուլտուրան կարելի է չափել նրա գործ դրած սապօնի քանակութիւնից։

Բայց կարելի է մի երկրի քաղաքակրթութեան աստիճանը չափել և նրա մէջ գոյութիւն ունեցող մամուլի դրութիւնից։

Մեզանում դեռ շատ քիչերն են հասկանում մամուլի նշանակութիւնը և այն ահագին տեղը, որ նա բռնում է մի երկրի վերածնութեան, յառաջադիմութեան գործում։

Տեսնենք թէ մամուլը ինչ դրութեան մէջն է։

Անօթի է մեր մամուլի դրութիւնը համեմատել խորը Ասիայում-Ճապոնիայի, Հնդկաստանի մամուլի դրութեան հետ։ Այդ հեռու երկիրներում պարբերական հրատարակութիւնները թէ բազմաթիւ են և թէ թերթեր կան, որոնց բաժանորդներն քան և աւելի հազարների են հասնում։

Կովկասում և Ռուսիայում հայերի թիւը համարվում է մէկ միլիոնից աւելի, բայց մինչև այսօր մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները միասին առած՝ հազիւ թէ ունենան—չորս հազար բաժանորդներ, բայց ինչ բաժանորդներ։

Այդ բաժանորդների մէկ որոշ մասն էլ պէտք է հաշուել Պարսկաստանի, Փոքր-Ասիայի և ուրիշ երկիրների վերայ։ Եթէ ասենք, որ այդ բաժանորդներից շատերը միևնոյն ժամանակ անխտիր բաժանորդ են հայոց պարբերական թերթերին, այն ժամանակ կարելի է հայ պարբերական հրատարակութիւնների բաժանորդների թիւը համարել մօտաւորապէս միմիայն —երկու հազար։ Ուրեմն մէկ միլիոնի համար երկու հազար բաժանորդ։ Ահագին տարբերութիւն։

Բայց Ջաշից յետ երբ Սամուէլը Մարգարի հետ առանձնացաւ դահլիճը, իբր Թէ իրենց ամուսնութեան մասին նրա հետ խորհրդածելու համար, և Ելենան մնաց միայն, դարձեալ սրբսուր մտատանջութիւնները պաշարեցին նրան։

—Այս ո՞րտեղ եմ ես. այս ինչ եմ անում... մտածում էր նա ինքն իրեն.—վախստական իմ ընկերուհիների միջից, ես նստել եմ մի օտարի տանը, օտար տղաների հետ, և քէֆ եմ անում... գինի եմ խմում, կենացներ եմ դատարկում... բայց իմ մայրը, իմ հայրը... ուր են նրանք ո՞րտեղ են, չէ որ ինձ են պատրաստում... Եւ մի՞թէ ես խելագարուել եմ, ուր եմ մնում այստեղ և մինչև երբ պիտի մնամ... Այս մըտածմունքները նրան շատ վրդովեցին։ Նա վեր կացաւ տեղից և դիմեց դէպի դահլիճի դուռը՝ դուրս գնալու դիտաւորութեամբ։ Յանկարծ նրա ականջին զարկեց Մարգարի ձայնը.—նա այնպէս բարձր էր խօսում, որ Ելենան ոչ մի կերպով լսել հեռևեալ խօսքերը.

—,,Բայց գիտէ՞ս ինչ լրարանցում է եղել այսօր տ. Բերնարի կարանտոյում։ Ելենայի ծնողները գնացել են այնտեղ և պահանջել իրենց աղջիկը։

Տ. Բերնարը նրանց հետ կռուել է. վերջը ոստիկանութիւնը հրաւիրելով արձանագրութիւն է կազմել տուել՝ իբր Թէ նրանց պատժելու համար, որովհետև իբրև զրպարտել են։ Հենց այն ժամին երբ ես անցնում էի կարանտոյի առջևից, Ելենայի ծնողները նոր էլեն դուրս եկել տ. Բերնարի մօտից. խեղճ մայրը այնպէս էր լաց լինում, այնպէս էր կօծում իրեն, որ ամբողջ փողոցը Թափուել էր գլխին...Ելենան այլ ևս սպասել չը կարողացաւ, նա արագութեամբ բացաւ դուռը և խելագարի նման նեղս ընկաւ դահլիճը.

—,,Այդ ինչի՞ը էք պատմում, այդ ինչի՞ը են պատահել, իմ ծնողները պարտում են ինձ, նրանք լաց են լինում, նրանք ծեծում են իրենց...իսկ այդ բոլորը դուք Թագցնում էք ինձանից...ախ անգութներ, ինչո՞ւ քնացրիք ինձ, ինչո՞ւ սպանում էք մեզ...

—Ի՞նչ է պատահել, Ելենա, հոգեակս, ինչ բանից ես վրդովել, փաղաքշում էր նրան Սամուէլը, իբր ոչինչ չ'իմանալով։

—Ի՞նչ բանից...դեռ նո՞ր էք հարցնում. բայց ես բոլորը լսեցի...Ի սէր Աստուծոյ, պարոն, ազատեցէք ինձ այստեղից, տարէք ինձ իմ ծնողների մօտ. ես չեմ կարող ուշանալ, իմ չունչս կտրվում է, ես խելագարվում եմ... տարէք ինձ...

—Բայց ես այսպէս ցերեկով քեզ հետ գալ չեմ կարող, դա ամօթ բան է ինձ համար. սպասիր, մուրճը մի փոքր կը կոխէ, այն ժամանակ ես կ'ուղեկցեմ քեզ։

—Ամօթ բա՞ն է...օ՜ օ, ամօթ բան է ինձ հետ ման գալ, շատ լաւ. ուրեմն ես միայնակ կերթամ. գոնէ ցոյց տուէք ինձ ձեր տունից դուրս գալու Ճանապարհը։

—Բայց այժմ ո՞ւր ես գնում դու. գոնէ մի երկու ժամ էլ սպասիր...

Ելենան Թողեց Սամուէլի խօսքը իւր բերանում և ինքը դուրս պրծաւ դէպի պատշգամը. այդտեղից այծեամի արագութեամբ վար իջաւ պարտէզը։ Ջրօսանքի ժամանակ նա այդտեղ նկատել էր մի գաղտնի դուռը, որը և իւր բաղդից բաց գտաւ։

Այդ դռնից նա դուրս վախաւ և այլայլուած սկսաւ վազել ծեծաւոր և նեղ փողոցի մէջ։

—Ինչո՞ւ համար ծառաներից մէկին չես հրամայում քեզ հետ դարձնել նրան, հարցրաւ Մարգարը Սամուէլից, երբ Ելենան իջաւ պարտէզ։

—Ի՞նչ հարկ կայ. Թող ուր ուզում է գնայ, պատասխանեց Սամուէլը. այդպիսով նա իմ գործը դիւրացրաւ։ Իմ միակ ցանկութիւնը այն էր, որ այսօր քեզ նրա հետ ճաշ տայի իմ տանս. խոստումս կատարեցի և այժմ հանգիստ եմ։

—

Ձգնաժամ.

Հասնելով մի մեծ փողոց, Ելենան դանդաղեցրաւ իւր քայլերը, որպէս զի երագելով անցորդների ուշադրութիւնը չըգրաւէ։ Եւ Թէպէտ նրա վերայ ոչ մի առանձին ուշադրութիւն չէր դարձնում, բայց ինքը անդադար աջ, ձախ և չետ էր նայում։ Նա կարծում էր որ բոլորը գիտեն իւր արածը, որ բոլորը իւր վերայ են խօսում...նա մինչև անգամ իւր երևակայութեան մէջ լսում էր Թէ ինչպէս իւր ետևից ծաղրում են իրեն։ Եթէ մէկը Ճանապարհին դէմադէմ պատահում էր նրան և աչքերը ուղղում էր իւր վերայ, ինքը երեսը շուռ էր տալիս, վախենալով Թէ՝ խոյոյն մի նախատինք պիտի լսէ այդ անցորդից։ Նա մինչև անգամ ամաչում էր օր ցերեկով փողոցի մէջ—բաց երկնքի տակ գտնուելուն համար և անհանգստութեամբ շտապում էր մի գաղտնարանի մէջ ծածկուելու։ Փուլչատեանի առանձնարանից դուրս գալու րոպէին նա միայն մի բան էր մտածում.—Դիմել իւր ծնողաց մօտ, յայտնել՝ որ ինքը կորած չէ, որ ինքը կենդանի է, և այսպիսով ուրախացնել նրանց...Իսկ այժմ նա այդ մտքից անգամ սարսափում էր։ Ի՞նչ երեսով գնալ իւր ծնողաց մօտ, ինչով արդարացնել իւր անյայտանալը...

Վերջապէս նա վճռեց դեռ գնալ տ. Բերնարի մօտ, այն կնոջ՝ որ իւր համար պատրաստեց այս հոգեկան տագնապը... Գուցէ նա նրան մի ելք կը սովորեցնէր...Ուստի և ուղղեց իւր քայլերը դէպի կարանտոյը։

Կիւրակէ լինելով օրուան այդ ժամին կարանտոյի մէջ ոչ ոք չը կար։ Թէ կարողուհիները և Թէ ինքը տ. Բերնարը դուրս էին եկել զբօսնելու. միայն պառաւ աղախինն էր որ իւր տիկնոջ առանձնարանի դրան առաջ պատւիրած քնած էր։ Ելենան առանց նրան զարթեցնելու անցաւ նախասենեակից և մտաւ այն վոքրիկ սենեակը, ուր սովորաբար նրանց կարերով առանձնանում էին ինքը, Նինոն և Շուշանը կարողուհիների շաղակրատութիւնից և ամեհգիտեղ խօսակցութիւններից ազա-

լիճնից աւելի ժողովրդի մէջ հայերէն թերթ ստացողների թիւը հասնում է միմիայն—2000-ի։

Ո՞րտեղ է յառաջադիմութիւնը, և ինչ բանի վերայ հիմնած հայերը ձգվում են եւրոպական ազգերի հետ։ Մի երկու միլլիօն բնակիչ ունեցող եւրոպական երկիրներն եթէ վերցնենք, ինչպէս Զուիցերիա, Դենեմարք, Հօլանդիա, Բէլգիա և կամենանք դրանց լուսաւորութիւնը մերի հետ համեմատել, շատ հետաքրքիր հետևանքների կը հասնենք։

Բաւական չէ, որ մեր մամուլը այս խղճալի վիճակի մէջն է, պէտք է և տեսնել թէ ինչ տարօրինակ յարաբերութեան մէջն է բաժանորդը խնբագրութեան հետ։

Ո՞վ է իմացել թերթի ապառիկ, բայց «նիսիա» թերթ ստանալը մեր ազգային նոր առանձնայատկութիւններից մէկն է։

Կարող են երևակայել թէ մեր պարբերական հրատարակութիւնները ո՛րքան ապառիկներ ունին։ Թերթը ստանալ և փողը չը վճարել, կամ տարին տասն անգամ հասցէն փոխել և վերջը խաբել կամ կամեցած օրը ուղածին չափ փող ուղարկել և թերթը էլ չը ստանալ, չը նայելով որ ամբողջ տարուայ բաժանորդ են գրուել, կամ այս կողմը այն կողմն ընկնել թերթը ձեռք բերելու համար, որ ինչ է հինգ կոպէկ ծախքից ազատ մնան—դրանք սովորական են մեր մէջ։

Էլ չը խօսենք այն ամեն նենգութիւնների, թերթին վնասելու համար գործ դրած քայլութիւնների մասին։ Մեր ժողովրդի մէջ դեռ յառաջադիմութիւնը այն աստիճանի վերայ է կանգնած, որ յառաջադէմ կարծուածներն կարող են առանց ամաչելու կռուել գըրչի դէմ ո՛չ թէ գրչով, մտքի դէմ ո՛չ թէ մտքով, համոզմունքի դէմ ո՛չ թէ աւելի զօրեղ համոզմունքով, այլ միմիայն—բաժանորդագինը չը վճարել տալով, որպէս զի թերթը խափանուի։

Ահա այս է մի քանի խօսքով մեր մամուլի դրութիւնը, ուրեմն և մեր քաղաքակրթութեան աստիճանը։

Եթէ մի յոյս կայ ապագայի համար, այդ այն դէպի մամուլը ցոյց տուած եռանդն, այն սէրն և հաւատարմութիւնն է, որ գտնվում է խեղճ ուսուցչի, երիտասարդ արհեստաւորի, վաճառականի մէջ։

Ձշմարիտ զարմանալի է այդ ամենից յետոյ տեսնել թէ՝ ինչպէս խեղճ ուսուցիչը, արհեստաւորը, գրաշարը, գիւղացին իւր քրտինքով աշխատած մի քանի կոպէկից մասն է հանում հայ լրագրին, իսկ մեր ինտելիգենցիայից շատերը... բայց թողնենք դրանց, որ ոգևորուին դրանք իրենց չը գրած և լոյս չը տեսած յօդուածներով։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Ամսոյս 11-ն լողանալիս Կուր գետին զոհ գնաց երիտասարդ գիմնազիստի աշակերտ Քրիստափոր Աւետիսեանց։ Խեղճի դիակը գտնուեցաւ ամսոյս 13-ին Սաղում կամուրջի տակ։

—

„Новости“—ն գրում է. Բուխարայից ստացած տեղեկութիւններից իմանում ենք, որ օգոստոսին մի խումբ բուխարացիները կը գան Պետերբուրգ՝ կայսերական հասարակաց մատենադարանում գտնուած Մահմեդի վեհայ Ալիի որդիներանց արիւնով ողողուած զուբանին երկրագուելիւն տալու, որը ռուսները բերել են Սամարկանդից և դա բուխարացիների համար մի սրբութիւն է կազմում։

—

Վիէննայից յուլիսի 5-ից (17) հեռագրում են „Новости“ թերթին թէ՝ Պրեսբուրգի մօտ Դունայ գետից հանեցին երկու շաբաթ առաջ անհետացած ռուս խմբագիր Շորովի (նա է և Կրօտկով) դիակը։

—

Կիմանամք թէ Մշոյ ազգայինք վերջերս իրենց ծախիւք բոլորովին գեղեցիկ չինք մը չինած են իրենց աղջկանց վարժարանին համար. ինչպէս յայտնի է, այս վարժարանն Ազգ. Հայ. ընկերութեան ծախիւք կը կանմուի Մխայեակ ընկերութեանց տեսչութեամբ։ Տեղացիք մտադիր են նոր չինք մ՝ալ իրենց արական վարժարանի համար կառուցանել, որ նոյնպէս Մխայեակ ընկերութեանց կանմոց ներքև կը գտնուի։ Այս գործին յաջողութեան մեծ աշխատութիւն տուած է Տաճկահայաստանի վարժարանաց ընդհ. տեսուչ Սարգեան Միքայէլ էֆէնտի։

„ԱրևԵլք“

Պարինդի մօտերը Ռընդվան գիւղի ազգայինք ևս վախաքելով իրենց վարժարանի համար չինք մը կառուցանել, հանգանակութեան մը ձեռնարկած են որոյ կը նպաստեն Բաղէշի կառավարութեան մի քանի բարձրաստիճան պաշտօնատարք։ Վարժարանը կը կանմուի Սուվելոց յանձնաժողովոյ ծախիւք և Մխայեակ Ընկերութեանց տեսչութեամբ։

„Արև Ելք“

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ, 27 յունիսի. Ե-թէ պարբերական Թերթերի մէջոցաւ ցանկանայինք որև է տեղեկութիւն ստանալ Շուրայլ հայերի մասին, շատ պէտք է դժուարանայինք։ Թերթելով լրագրութեան էջերը ոչ մի տեղեկութիւն չենք կարող գտնել, եթէ հանդիպելու էլ լինինք նրանց՝ կցկտուր լուրեր պէտք լինին։

Բայց մի՞թէ հետաքրքիր չէ մեզ համար Դաղստանը, այդ լեռնային երկիրը, որը երկար պատերազմներից յետոյ, խոնարհեց Ռուսաց հզօր իշխանութեանը։

Մի՞թէ հետաքրքիր չէ մեզ համար Դաղստանում ցրուած հայերի գրութիւնը, որոնցից շատերը ամբողջ գիւղերով Թողել են և՛ կրօն և՛ ազգութիւն, իսլամի ազդող տարրի տակ։

Թողնելով առ այժմ այդ բոլորը, մի քանի խօսք Շուրայում բնակուող հայերի մասին, որոնք շատերիս համար գուցէ գոյութիւն չունին։ Շուրայում բնակվում են այժմ հարիւր տուն հայեր, որոնց մեծ մասն չամախեցի են. ունին մի փոքրիկ եկեղեցի, որի հիմքը դրել է իշխան Մովսէս Զաքարեան Ար-

ղութեանը։ *) Եկեղեցու գաւթում գտնվում է փոքրիկ ծխական ուսումնարանը։ Շուրայի հայերը պարապում են մեծ մասամբ վաճառականութեամբ, շատ քչերն են պարապում արհեստով։ Մի խնդիր, որ այժմ զբաղեցնում է Շուրայի հայերին, որը այժմ ամեն մի հայ բնտանիքում խօսակցութեան առարկայ է եղած, այդ տեղւոյս Գիշորդ քահանայ Փարեմուզեանի և ժողովուրդի մէջ ծագած խռովութիւնն է, „խռովութիւն“ որ եթէ այսպէս շարունակուելու լինի, վատ հետևանք է ունենալու։

Թէ ինչ է եղել պատճառը այդ խռովութեան, այդ ոչ հետաքրքիր է և ոչ էլ լրագրում անցնելու հնար կայ, ես միայն կը գրեմ այն, ինչ որ այսօր կայ, ինչ որ այսօր զբաղեցնում է Շուրայի հայերին։

Խռովութիւնը, վէճը, յուզմունքը այն աստիճանի են հասնում, որ միաձայն բողոքելով քահանայի դէմ, խնդիր են ներկայացնում Թեմական առաջնորդ գեր. Սուքիաս եպիսկոպոսին, մի առ մի յիշելով քահանայի արարքը, միանգամայն մերժում են իրենց քահանայից և նոր քահանայ են խնդրում։

Խնդիրներին յաջորդում են հեռագիրները, հեռագիրներին՝ մասնաւոր նամակները. բայց այդ խնդիրները և հեռագիրները մնում են դեռ առանց պատասխանի։ Ժողովրդի մէջ յուզմունքը աւելի սաստկանում է, տիրում է սառնութիւն դէպի եկեղեցին շնորհիւ անհոգ, ապիկար քահանայի, հարիւր տուն հայ բնակիչ ունեցող Շուրան, պատրաստ ժամանակ կամ երեք մարդ է լինում կամ քահանան չորս պատերին է տալիս „խաղաղութիւն“։

*) Սրա արձանը գտնվում է քաղաքի ծայրի մօտ, քաղաքական այլևի հանդէպ։

ասած, խնդրում եմ, ո՞րտեղ էիր, Լբը եկար այստեղ։

—Ինձանից ոչինչ մի հարցնել, Նենո, հոգեակս, ես այժմ ոչինչ չեմ կարող ասել քեզ...

—Ինչպէս թէ ոչինչ չես կարող ասել. մի՞թէ մի դժբաղդութիւն է պատահել քեզ հետ։

—Ոչինչ դժբաղդութիւն չէ պատահել. միայն եղբ. մի՞այնտեղ էիր, ուր որ դուք ղըրկել էիք, կոյտ ձայնով նկատեց Նէնան, այս դուք պէտք է որ գիտենաք...

—Երիտասարդ Փուչչատեանի տունը։

—Այո՛.

—Բայց ես չէի ղրկել ձեզ՝ որ այսքան ժամանակ այնտեղ մնայիք և ձեր անքաղաքավար ծնողները ինձ վերայ կատաղեցնէիք։

—Անկիրճ էք խօսում, տիկին։ Այս ասելով Նէնան իւր հայեացքը սևեռեց ուղղակի տիկնոջ աչքերին։

Տ. Բերնարը ուշադրութիւն անգամ չ'դարձրաւ նրա խորհրդաւոր հայեացքին, և սառնասրտութեամբ շարունակեց։

—Օրիորդ, ես ձեզ այդպէս չէի ճանաչել. այժմ դուք մի շատ վտանգաւոր աղջիկ էք երևում իմ աչքում, ձեր այդ ակնարկութիւնները ինձ համար անտանելի են. և ես կը կամենայի որ իմ կարանոցը օր առաջ ազատ լինէը մի զըպաբաղից. դուք կարող էք մինչև անգամ արատաւորել նրա անունը։

Հեղինէն մնաց ընդարմացած. այս նրա սրտին կայծակի հարուած իջեցրին, և նա առաջին անգամ զգաց պատուի կործանման ծանրութիւնը...

Բայց տ. Բերնարի այս տեսակ անողոք վարմունքը ունէը իւր բնական պատճառները։ Զգալով իւր գործած յանցանքի մեծութիւնը, նա աշխատում էր Նէնայի ամենավոքը ակնարկութիւններն անգամ, որոնք վերաբերում էին իրեն, պատժել սպառնալիքներով և նրա ամօթխած ու երկչոտ բնաւորութիւնը այս ճանապարհով բռնաբարելուց յետ՝ չքացնել միանգամայն իւր անձին սպառնացող վտանգները։ Եւ նա իւր հաշուի մէջ չէը սխալվում։ Նէնան այժմ մի ծծկեր երեխայից էլ աւելի անզօր էր դարձել, ամեն մի ծանը խօսք նրան չփոթում էր. և տ. Բերնարը վտանգներից իրեն ապահովացնելու համար կարող էր անել նրա հետ ինչ որ կամենար։

—Դուք պէտք է գնաք ձեր ծնողաց մօտ, խօսեց նա կրկին. երբ տեսաւ թէ Նէնայի լռութիւնը շարունակվում է. գոնէ ձեր տան մէջ դուք պաշտպանուած կը լինիք. մինչդեռ այստեղ մեր աղջիկները ձեզ շատ նեղութիւն կը պատճառեն. ձեր վարմունքը աւելի կը տայ նրանց ձեզ ծաղրելու, իսկ ես չեմ կարող միշտ զսպել նրանց։

Այս նոր հարուածէ վերայ Նէնան ամբողջ մարմնով դողդողաց. նա ըմբռնեց տիկնոջ խօսքերի բոլոր ճշմարտութիւնը... Եւ նրաւ, չէ որ նա այժմ մի անպատուած աղջիկ էր և նրան ամեն մարդ կարող էր և նրաւունք ունէը ծաղրել... Այո՛, ամեն մարդ, մինչև անգամ փողոցի կանայք...

—Շնորհակալ եմ, տիկին. դուք ինձ լաւ խորհուրդ էք տալիս, վերջապէս խօսաց Նէնան նուաղած ձայնով, ես կերթամ, կը հեռանամ այստեղից, միայն մինչև երեկոյ թոյլ սրտի տակ մնալ այստեղ, ես օր ցերեկով չեմ կարենում ոչ ոքի երևալ։

—Շատ լաւ, ինչպէս կամենում էք, ասաց տ. Բերնարը և դուրս գնաց սենեակից։

Նէնան մնաց միայն. նա գլուխը կախեց և ընկղմուեցաւ ախուր մտածմունքների և հոգեկան տանջանաց անյատակ ծովի մէջ։

—Այո՛, ես մի անպատուած աղջիկ եմ, և տ. Բերնարը իրաւունք ունի ինձ իւր կարանոցից արտաքսելու. ես կարող եմ արատաւորել նրա անունը... Նա մինչև անգամ ինձ խղճում է. նա չէ կամենում որ իւր աղջիկները ծաղրեն ինձ... Աստուած իմ, Աստուած իմ, և մի՞թէ ես անարգութեան մինչև այս աստիճանը պիտի հասնէի, մի՞թէ ես այնքան պիտի ստորանայի որ տ. Բերնարի կարողներն անգամ ծաղրէին ինձ։ Եւ տ. Բերնարը, որ թշուառութեան այս արկածը իւր ձեռքով իմ գլխի վերայ վաճաճեց, չի կամենում մի օր անգամ պատսպարել ինձ իւր տան մէջ. նա վախենում է հասարակութեան բերանից, նա պատուաւոր կին է...։ Իսկ ես ո՞ւր գնամ, Աստուած իմ, ո՞ւմ դիմեմ.—մի՞թէ իմ ծնողաց մօտ. բայց ինչ երեսով. ինչու համար. որպէս զի նրանց էլ ընկեր հարևանի մօտ ծաղրի և խայտառակութեան առարկայ չինեմ... խեղճ իմ բարի ծնողներ. և դուք երբէք չէիք կարծիլ թէ ձեր Նէնան, ձեր համեստ և ամօթխած աղջիկը, որին այնքան վայելում, սիրում և պաշտում էիք, մի օր պիտի կորցնէր ձեր մխակ և թանկագին հարստութիւնը—ձեր անբասիր անունը և պատիւը... Օ՜հ, ոչ, ես չեմ ազրիլ որ ձեզ անպատուութիւն բերեմ. ես կը մեռնեմ. աւելի լաւ է ինձ կորցնէք քան թէ ձեր բարի անունը...

Այս խօսքերից յետ նա վերկացաւ տեղից և սկսեց յուզուած անցուդարձ անել սենեակի մէջ։ Յանկարծ մի լուսաւոր միտք ծագեց նրա գլխում և նրա երեսը վայլեց մի անսովոր ուրախութեամբ։

—Ինչու՞ համար այս աստիճան ես կորցրել եմ ինձ, բացագանչեց նա. ինչու՞ համար սպանեմ ինձ. մի՞թէ ես այլ ևս պաշտպան չունիմ.—իսկ իմ Սամուէլը. ինչու՞ համար ես մոռացել եմ նրան. չէ՞ որ նա ինձ սիրում է. չէ՞ որ նա իմ նշանածն է։

Այո՛, ես կերթամ նրա մօտ. նա ինձ կը պաշտպանէ. նա չի թողնիլ, որ ու-

Ս ա ռ ա ն ե ա կ ա ն

— Ես ամեն ինչ գիտեմ, ասաց Ռուբենը, ես ամեն ինչ լսեցի, ինչ որ դուք խոսեցիք ձեր մեջ, ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ դուք ուզում եք ինձանից թաքցնել, ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ դուք ինձանից ուզում եք գաղտնի պահել, ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ դուք ինձանից ուզում եք խորհրդավոր պատի տակ թաղել, ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ դուք ինձանից ուզում եք ծածկել ձեր սրտի խորքում, ես ամեն ինչ գիտեմ, ինչ որ դուք ինձանից ուզում եք ամենախորին գաղտնիքի մեջ պահել

կայն նկատելի է, որ այս անգամ հասարակութեանը քիչ է գրաւում այդ հանդէսը, քան թէ անցեալ տարինները, այնպէս որ այս տարի ազգային տօնը, հաւանական է, որ իւր նախորդներից շատ հեռի լինի։ Շոգը անտանելի է,—շուաքներում 32 աստիճան Ռէօմիւրի ջերմաչափով։

—Նոյն տեղից յուլիսի 2-ից (14) հեռագրում են. „Շոգը վոլգը ինչ մեզմացել է, սակայն վոլգոցներում կենդանութիւնը այնքան էլ մեծ չէ։ Ելիսեան դաշտում հանդէսը անհետաքրքրական էր և շարունակուեց կէս ժամից աւել։ Բազմութիւնը նոյնպէս քիչ էր, բայց նա ծափահարում էր որսորդներին և հրաշէջների գնդին։ Կէսօրուայ մօտ էլզասցիների սովորական ցոյցերը եղան Ստրասբուրգ քաղաքի արձանի առաջ Համաձայնութիւն հրապարակում։ Նոյնպէս ազգասիրական ճառերը արտասանուեցան և արձանը զարդարեցին դրօշակներով և ծաղկեայ պսակներով։ Դրան ներկայ էին մի քանի հազար հանդիսատեսներ։

—

Տուլօնից յուլիսի 2-ից (14) ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մինչև այդ օրը այդտեղից երկաթուղիներով գնացել են 10,694 մարդ։ Առողջապահական խորհուրդը վճռեց երկաթեայ մեծ աւազան շինել, որը մեշտ պիտի եւ եկող ջրով լիքը լինի, և պատուէր տուաւ ժողովրդեան վարակուած առարկաները լուանալու այնտեղ, այն է՝ սալտակեղէնները, բաժակները, գաւաթները և այլն։ Մարսէլից յուլիսի 3-ից (15) հեռագրում են, որ այնտեղ վոլգոցներում խոլերայով հիւանդացողների թիւը աւելանում է։

—

—Փարիզից յուլիսի 2-ից հեռագրում են „National zeitung“—ին, որ այս անգամ ազգային տօնի առթիւ մեծ զօրահանդէսը տեղի ունեցաւ ոչ թէ Բուլօնեան անտառում, ինչպէս առաջուայ տարիները, այլ մայրաքաղաքի երկու զանազան կենդրոններում։ Ուրեմն երկու հսկողութիւն էր լինում, մէկը՝ Ելիսեան դաշտում, միւսը՝ Տրօնայա հրապարակի վերայ. զանազան գնդերը պիտի մանէին այն հանդիսի մէջ, որը կատարվում էր նրանց զօրատներն մօտ։ Առաջին զօրահանդէսը արաւ Փարիզի գեներալ—նահանգապետ Սօսիէն, իսկ երկրորդը՝ գեներալ Բօլանը։ Պալրօցական զօրագնդերի հանդէսը տեղի ունեցաւ քաղաքի կենդրոնում, հրապարակի վերայ։ Երեք հանդէսներն էլ խաղաղութեամբ անցան։ Շոգը անտանելի չէր. ջերմաչափը 23 աստիճան տաքութիւն էր ցոյց տալիս. քամին զովացնում էր բարեխառնութիւնը։ „Ազգասէրների համբի“ ցոյցերը Համաձայնութիւն հրապարակի վերայ Ստրասբուրգ քաղաքի արձանի առաջ նոյնպէս կատարուեցաւ, ինչպէս և առաջուայ տարիները։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՒԱՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

12 Յուլիսի,

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Новое Время»-ն հաղորդում է, որ աշնանային նիստերի շրջանի սկզբում Պետական Խորհրդին նախագիծ կը ներկայացնուի արտասահմանեան երկաթի, մեքենաների, երկաթեայ և մետաղեայ գործիքների մաքսը բարձրացնելու մասին։

Մայրաքաղաքի առողջապահութեան մասին քաղաքապետի արած կարգադրութիւնները եռանդով են կատարվում. մի քանի մսագործներ և կանաչեղէն ծախողների խանութներ փակուել են. քաղաքային վարչութիւնները դեղավաճառների՝ ժանտախտի դէմ գործ դրուելիք ամենաանհրաժեշտ դեղորայքների գները ինքնակամ բարձրացնելու դէմ միջոցներ ձեռնարկեցին։

ԲՐԻՒՍԵԼ. Սենատի պատգամաւորների պալատի ընտրուած նախագահութեան կազմակերպութիւնը բացառապէս բաղկացած է կղերականներից։ Օրէնքների նոր նախագծեր են մտցրուած դպրոցական գործը փոխակերպելու մասին և Վատիկանի մօտ Բելգիայի ներկայացուցչի վերականգնման մասին։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի երիտասարդ, որ չորս տարի է շարունակ պարապել է ուսուցչութեամբ Ռուսաց դպրոցներում, այժմ կամենում է Ռուսաց լեզուից և թուաբանութիւնից դասեր ունենալ Հայոց ծխական դպրոցներում։ Ցանկացողներն թող դիմեն այս հասցէով.

Дербентъ, учителю Городскаго училища господину Азатову.

3—2

ՍՏԵԱՐԻՆԻ ՄՈՄԵՐ, առաջին տեսակի 4—նոց և 5—նոց, պուդը 11 րուբ., ֆունտը 28 կոպ.։

ՏՕԼԼԷ.

5—2

«ԱՂԲԻՒՐ»

Լոյս տեսաւ № 7 (յուլիս) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

Աքաղաղ (ոտանաւոր) . . . . . Ս. Քամալեանց
Ս. զատիկ մակոյկը . . . . . Զօկ
Թուփ տրտունջը . . . . . Աղ. Ստեփան.
Հակայ Մրջիւն (Շարունակութիւն) . . . . . Տ. Դիւզալեանց
Արտուտ (բանաստեղծութիւն) . . . . . Սրինգ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Բուսական աշխարհից (անմշակ ու մշակուած ծառի կեանքից) . . . . . Կ. Կ. Մ.-Շահ.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զուկէէյանուանուած ցեղի մանուկները։
Միջատներն իբրև կերակուր,

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կապիկն ու շունը . . . . . Օր. Կ. Աալան.

Մանուկ ճանապարհորդներ։
Կոյր։

ԶՕՒԱՐՃԱԼԻՔ

Թուաբանական խնդիր։ Հետաքրքիր թիւ։ Հանելուկներ։ Դեղչկուհին և տղաները։ Սէքափափուկի (մանկական խաղ)։ Շուտասելուկ։ Րեբուսներ։
Նախընթաց №№ 5-6-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ջան գիւղում, ջան ծաղիկ (ժողովրդական երգ նոտաներով)։



ԱԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹ ՈՒՂԻ·

«ԹԻՓԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԳՆԱԼԸ ԵՒ ԳԱԼԸ

Փոստան գնում է Բաթում առաւօտեան	8	ժ. 31	րոպէին
„ գալիս է Բաթումից գիշերուայ	10	„ 25	„
Ուղեւորների և ապրանքների գնացքը գնում է Բագու առաւօտ.	10	„ 45	„
Բագուից գալիս է կէսօրուայ	2	„ 30	„

Շաբաթը մի անգամ ուղեւորների և ապրանքների գնացքի վերադարձն լինում է ուղեւորների արագ գնացքը.

Բագու գնում է երեքշաբթի երեկոյեան	10	„ 58	րոպ.
Բագուից գալիս է ուրբաթ առաւօտեան	7	„ 53	„

Թիֆլիսից և Սուրամից մէջ · 3 „

Թիֆլիսից ուղեւորների և ապրանքների գնացքը գնում է ցերեկ		11	„
սերամից „ „ գալիս է առաւօտեան	8	„ „	„

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՉԻՆՓԵՐԻ

ՆԻՒ-ՅՕՐԿՈՒՄ



ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԿ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՓԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏՈՒՄ, ՄԻՐԻՄԱՆՕՎԻ ՏԱՆԸ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՁԽԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ

Որը արժանացել է Ամստերդամի համաշխարհական հանդիսին 1883-ին

Միակ ամենաարժէր պարգևը պատուաւոր դիպլոմ

Մօտ օրերում ստացայ մեծ քանակութեամբ և աւելի կատարելագործուած զանազան տեսակ արհեստաւորների և ընտանեկան կարեմեքենաներ իրենց օգնական նոր գործիքներ։ Այս և նոր ոտերով, որոնք առանց աղմուկի թեթեւութեամբ բանում են, այնպէս, որ ամենաթոյլ մարդիկ և ծերուներն անգամ, առանց այժ գործ դնելու կարող են գործածել։ Ինչ մեքենաներից 1883 թ. ԾԱԽՈՒԵՑԱՒ մօտ 700,000 հատ, այնպէս որ անցեալ տարում աւելի շատ ծախուեցաւ քան թէ 1882 թուականում։ Սա ամենալաւ ապացոյցն է թէ րով լաւ յատկութիւն ունին ՉԻՆԳԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ։

Նախազգուշութիւն. Չինգերի իսկական կարեմեքենաները մնծ համբաւ ունին, որովհետև իրեց դեղցիկ յատկութիւններով և ամրութեամբը գմայլեցնում են ամենքին և հէնց այդ է պատճառը, որ ուրիշ գործարանատէրեր կեղծում են և Չինգերի իսկական մեքենայի անունով ծախում։ Այդ պատճառով անհրաժեշտ է դարձնել ձեր ուշադրութիւնը նրա վերայ, որ Չինգերի իսկական կարեմեքենաներից իւրաքանչիւրը կրելով անգլիական լեզուով «Մանուֆակտուրական Ընկերութեան Չինգերի» ֆիրման մեքենայի կողքի և մամուլի վերայ դրոշմուած են վերը դրած գործարանական մարկաները։ Չինգերի իսկական և օգտաւէտ կարեմեքենաները որ իւրաքանչիւր մարդ կարողանայ հեշտութեամբ ձեռք բերել, գնողները կարող են եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել, այն է՝ շաբաթը 1 ր. 50 կ. կամ ժամանակամիջոց ստանալ դրամը վճարելու համար, առանց անսակի գինը բարձրացնելու։ Հին մեքենան մաղազինում կարելի է փոխել։ Մեքենաները ուղղին նոյնպէս իրենց պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղները, թել, մետաքս, մեքենայի իւղ և այլն և այլն։

ԹԻՓԼԻՍ, Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

Բաժանումներ. ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ, Ալէքսանդրեան փողոցի վերայ, տուն Չերքէզովի, բուվարի հանդէպ։ ԲԱԳՈՒԻՄ, Մէքայէլեան փողոց, տուն Միրզա-Աւազովի։ ՌՈՍՏՈՎՈՒՄ, Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-օղլի։ Այս մեքենաների մշտական պահեստներ գտնվում են նաև Ղարս, Ելիսաւէտապօլ, Ալէքսանդրապօլ, Շուշի, Պետրովսկ և Աստրաբադ քաղաքներում,

50—10

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го Іюля 1884 г. Տպարան Ա. Ս. Մխիթարեանց ի Վենետիկ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д. № 12.